ՅՈՎՀԱՆՆԷՍ ԵՐԶՆԿԱՑԻ ՊԼՈՒՋԻ ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ ՅՈՎՀԱՆՆԷՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻՆ

Քրիստոնէական մտքի վաղագոյն շրջանից սկսեալ՝ աստուածաբանական տարաբնոյթ խնդիրներ արծարծուել եւ լուծուել են հարցուպատասխանիներում: Գրական այս տեսակը հնարաւորութիւն էր տալիս վարդապետական բարդ ու խրթին հարցերին տալ առարկայօրէն պարզ ու մատչելի պատասխաններ: Բաւական է յիշատակել հայ դաւանաբանական մատենագրութեան մէջ լայն շրջանառութիւն ունեցած «Բարսղի եպիսկոպոսի ուղղափառի եւ Ապաւղինարի հերձուածողի վիճաբանութիւն», «Հարցումն Բարսեղի Կեսարացոյն ընդ սրբոյն Գրիգորի Նիւսացուն՝ եղբարն իւրում» խորագրով երկերը, Գրիգոր Աստուածաբանի «Առ որս» ճառաշարի հիման վրայ կազմուած հարցմունքը եւ այլն: Աստուածաբանական հարցուպատասխանիներ շարադրուել են հայ ինքնուրոյն մատենագրութեան մէջ նմանապես. լայն շրջանառություն են ունեցել «Եղիշէի վարդապետի (իրապէս Վահրամ Բաբունուն պատկանող) Հարցմունք եւ պատասխանիք ի գիրս Ծննդոց», «Հարցումն Արձանայ թագաւորի եւ պատասխանիք Եզնկայ վարդապետի Կողբացւոյ», «Հարցումն Աշոտոյ Սմբատայ թագաւորի եւ պատասխանիք Եզնկայ հայոց վարդապետի», «Կոմիտասի Հայոց Կաթողիկոսի Պիռոսի պատրիարգի՝ հարցաքննութիւն եւ վիճաբանութիւն», «Տիրաննոյ հայոց վարդապետի պատասխանի հարցմանց թագաւորացն Աղուանից Ատրներսեհի եւ Փիպէի» եւ այլ երկեր: Աստուածաբանելու այս եղանակը նոյն իրաւունքով կիրառուեց նաեւ յետագայի եկեղեցական մատենագրութեան մէջ: Այս տեսակի առաւել բնորոշ օրինակներից է ստորեւ ներկայացող բնագիրը: Աստուածաբանական տարաբնոյթ խնդիրներ արծարծող հարցերի շարքն ինքնին դրսեւորում է այն հետաքրքրութիւնը, որ առկայ էր վարդապետական խնդիրների լուծմամբ շահագրգիռ հասարակական շրջանակներում: Այդ շրջանակների վարդապետական հարցասիրութեան թարգմանը Դոփի թոռ Յովհաննէս «բարձրատոհմ» եւ «մեծազարմ» եպիսկոպոսն էր:

Խնդրոյ առարկայ հարցուպատասխանին երկու Յովհաննէսների մօտիկ յարաբերութեան մասին վկայող միակ փաստը չէ: Ինչպէս յայտնի է, 1284 թ. Կիլիկիայից Հայաստան վերադառնալիս Յովհաննէս Երզնկացին որոշ ժամանակ մնում է Տփղիսում եւ տեղի կաթողիկէ եկեղեցում փիեզերագիտական բնոյթի մի քարոզ է խօսում: Այն մեծ հետաքրքրութիւն է առաջացնում ունկնդիրների մէջ: Հատկապէս մեծ էր Ումեկ իշխանի կրտսեր որդու Վախթանգի եւ Յովհաննէս եպիսկոպոսի հիացմունքը: Նրանց խնդրանքով Յովհաննէս Երզնկացին գրի է առնում իր այդ քարոզը[1]: Գա-

1 Տե՛ս **Ա. Երզնկացի-Սրապեան,** Յովհաննէս Երզնկացի Պլուզ, կեանքը եւ գործը, Եր., 1993, էջ 43:

լով մեզ հետաքրքրող հարցուպատասխանիին՝ պէտք է ենթադրել, որ Յովհաննէս եպիսկոպոսի հարցումների պատասխանը Երզնկացին շարադրել է հենց Տփղիսում եղած ժամանակ՝ 1284 թ.: Օգտագործելով պատեհ առիթը՝ տեղի հայութեան հոգեւոր առաջնորդ Յովհաննէս եպիսկոպոսը Յովհաննէս Երզնկացուն է ուղղում իր համայնքին յուզող հարցեր, եւ նրանից սպանում սպառիչ պատասխաններ: Դրանց մէջ դրսեւորւում են ոչ միայն Երզնկացու վարդապետական պատրաստուածութիւնն ու յմտութիւնը, այլեւ անցեալի հայրախօսական վաստակին քաջատեղեակ լինելը: Դատասխանիները շարադրելիս Երզնկացին ձեռքի տակ է ունեցել Մ. Յովհան Ոսկեբերանի, Եղիշէի եւ, ինչպէս ինքն է նկատում, «Հաւրն մերոյ», այն է՝ իր ուսուցիչ Վարդան Արեւելցու ուսուցիչ Վանական վարդապետի երկերը: Ոսկեբերանի ժառանգութեանը դիմում է երկիցս՝ անուանապէս եւ առանց անունը յիշատակելու: Առաջին դեպքում նա դիմում է Ոսկեբերանի հեղինակութեանը մեղքի պարտամուրհակը պատռելու կամ ջնջելու վերաբերեալ վարդապետական իր բացատրութիւնը յիմնաւորելիս[2]: «Զայս բանի լուծումն ունիմք ի մեկնութենէ Առաքելոյն, որ ի սրբոյն Յոհաննու Ոսկէբերանէ, զի ի Կողոսացւոց թղթին է այն բան» (Բ 14): Այս բառերով Երզնկացին ակներեւօրէն նկատի ունի Ոսկեբերանի Կողոսացւոց թղթի մեկնութեան յետեւեալ հատուածը. «Շնորհ ձեզ զյանցանսն, որք զմեռելութիւնն գործէին: Եւ թո՞ղ ինչ արդեաւք անտի. ոչ ասէ, այլ ջնջեաց եւս. ոչ եթէ դրոշմեաց միայն, զի մի՛ երեւեսցի եւեթ, այլ ջնջեաց: Հրամանաւքն ասէ. զհաւատսն կոչէ հրամանս: Բաւական իսկ է հաւատալն միայն: Ոչ եթէ ընդ գործսն գործս կշռեաց, այլ հաւատոցն զգործսն համեմատեաց: Եւ ապա զի՞նչ եւս առաւել յաճախութիւն. զի քան զթողուլն, ջնջելն մեծ է եւ քան զջնջելն՝ ի միջոյ բառնալն: Զիա՞րդ. զի եւ այնպէս չպահեաց, այլ պատառեաց բեւեռեաց ընդ խաչին. մերկացաւ զիշխանութիւնս եւ զպետութիւնս, բայց յանդիման խայտառակեաց զնոսա յանձն իւր: Չբարբառեցաւ ուրեք այսպէս մեծամեծս: Տես զփոյթն, զի եղծանել զդատակնիքն որպիսի ինչ գործս գործեաց, ամենեքեան ընդ մեղաւքն էաք եւ ընդ պատժովք. ինքն պատժեցաւ, եւ ելոյծ զմեղսն եւ եբարձ զպատիժսն: Դատժեցաւ ի Խաչին եւ անդ իսկ բեւեռեաց զնոսա, որպէս զի իշխանութիւն իսկ ունիցի այնուհետեւ եւ պատառելոյ զդատակնիքն: Զո՞ր դատակնիք. կամ զայն զոր ցՄովսէսին ասացին, թէ՝ «Զամենայն, զոր ասաց Աստուած, արասցուք եւ լուիցուք», եւ եթէ այս չիցէ, այն զի պարտիմք իսկ Աստուծոյ հնազանդութիւն, եւ եթէ այս չիցէ, այն է զի ըմբռնեալ ունէր սատանայ զդատակնիքն, զոր եւտ Աստուած Ադամայ, եթէ «յորում աւուր ուտիցես ի ծառոյն, մեռանիցիս»: Ըմբռնեալ սատանայի ունէր զայն ի ձեռին եւ չտայր ցմեզ. եհան ի նմանէ Քրիստոս եւ չեւտ ցմեզ, այլ ինքն պատառեաց եւ խնդութեամբ իսկ դիւրութիւն առնելոյ»[3]:

Ոսկեբերանի միւս երկը, որից, առանց անունը տալու, օգտւում է Երզնկացին,

---

2 Դարտամուրհակը պատռելու վերաբերեալ գաղափարն իր աղօթական արձագանքն է գտնում Նարեկացու մօտ. «Իցէ՞ թէ տեսցեն պատուհանք աչացս իմաստից զմուրհակ պարտուցս իմոց պատառեալ» (Բան ՀԵ դ) տպ. Եր., 1985, էջ 342, տ. 73-74:

3 Տե՛ս «Յոհաննու Ոսկեբերանի՝ Կ. Պոլսի եպիսկոպոսապետի մեկնութիւն թղթոցն Պաւղոսի», հտ. Ա, Վենետիկ, 1862, էջ 588-589:

Մատթէի մեկնութիւնն է: Չորրորդ հարցի պատասխանը շարադրելիս նա բառացի քաղումներ է կատարում Ոսկեբերանի նշանաւոր մեկնութիւնից: Այդ է ցոյց տալիս հետեւեալ համադրումը.

ՈՍԿԵԲԵՐԱՆ	ԵՐԶՆԿԱՑԻ
Ոմանց ծանր իմն եւ խիստ թուի հրամանս եւ ընդ դո՞յզն բանից ասեն պատիժս իցեմ կրելոց: Եւ ոմանց ըստ աւելեաց իմն թուի ասացեալ, իբրեւ ահ ինչ արկանելով: Այլ երկնչի գուցէ ասա բանիւք խաբիցեմք զանձինս եւ անդ արդեամբք իսկ տայցեմք զյետին պատժոցն տոկոսիս: Եւ արդ, ընդէ՞ր իցէ խիստ հրամանս. ո՞չ գիտիցես, եթէ մեծ մասին պատժոցն եւ մեղաց ի բանից է սկիզբն: Զի հայհոյութիւն եւ ուրացութիւն ի բանից են, եւ չարախօսութիւն եւ թշնամանք եւ սուտ վկայել եւ մահապարտ առնել[4]:	Ոմանց ծանր թուի հրամանս եւ խիստ, եթէ ընդ դո՞յզն բանից այսպիսի պատիժս եմք կրելոց զգեհենն: Եւ ոմանց ըստ աւելեաց թուի ասացեալս վասն ահ արկանելոյ: Արդ, նոցա, սպառնալիքն եւ փոքր մեղանքն Բ (2) են պատճառ... զի մեծ մասն պատժոցն եւ մեղացն ի բանից սկսանի, ըստ այնմ. «Եթէ ոք բանիւ ոչ յանցանէ, նայ է մարդ կատարեալ», զի հայհոյութիւն, ուրացութիւն, չարախաւսութիւն, թշնամանք ի բանից են:

Երզնկացու միւս աղբիւրը Եղիշէն է: Ադամորդու ազատ կամքի եւ ընտրութեան մասին աստուածաբանական խնդիրն արծարծելիս նա, առանց անունը տալու, մի հատուած է վկայաբաղում Եղիշէի «Մեկնութիւն Յեսուայ եւ Դատաւորաց» երկից: Ներքոբերեալ համադրումը ցոյց է տալիս, որ Երզնկացին այդ երկից մի ամբողջական հատուած բառացի ճշգրտութեամբ զետեղել է իր պատասխանի մէջ.

ԵՂԻՇԷ

Եթէ ի բնութիւն մարդոյս եկեսցես եւ իմաստուն մտաւք քննեսցես, գտցես նման նորա ազատութիւնն. եթէ կամի՝ աստուածաձեւ: Առաքինութիւն մարդոյն է աստուածային կերպարանք, զոր Աստուած բնութեամբ ունի, մարդ ստանալով կարէ ստանալ: Ապա եթէ ընդ երկիր պշնուցու ու գործովք սորա շաղեալ պատի, ինքն զինքն աւձաձեւ արար, որպէս աչաւք, ընչաւք, ականջաւք, բերանով եւ հինգերորդ՝ ներքին համաւքն: Միաբան շաղեալք պատին սոքա հնգեքեան,մանաւանդ զի իգական մասամբք, կանացի ձայնիւք մեղկին լսելիքն մարդոյն. մեղկեալն հանեալն անկանի անքակութեան ընդ զուգակցին, աչք ընդ աչս կքի եւ հոտ ընդ հոտ կոծի, բերան համբուրէ, եւ համք ընդ համս խառնի, զոր խոկումն անուանեցան: Այս չարք միաբանութիւն առ ծառոյն յայտնեցան: Յղացաւ աւձն զկերպարանս աներեւոյթ չարութեանն եւ եղեւ արու բնութիւն միջնորդութեամբ պտղոյ ծառոյն. պատրեաց եւ մեղկացոյց զհինգ զգայութիւնս իգական մասինն, յապուշ կրթեաց զմիտք կնոջն, եւ մոռացումն արար զպատուիրանս Աստուծոյ, մինչ չեւ մտեալ ի պատերազմն՝ պարտեցաւ ի հայելոյն, յորմէ դու պարտիս զգուշանալ[5]:

ԵՐԶՆԿԱՑԻ

Գիտասջիր եւ զայս, եթէ ի բնութիւնս մարդոյս եկեսցես, գտցես ի սմա նոր զօրութիւն՝ եթէ կամի աւձաձեւ լինի եւ եթէ կամի՝ աստուածաձեւ. առաքինութիւն մարդոյն է աստուածային կերպարանք, զոր Աստուած բնութեամբ ունի, մարդ ստանալով ստանալ կարէ: Ապա եթէ ընդ երկիր պշնուցու եւ զգործովք սորա շաղեալ պատի՝ ինքն զինքն աւձաձեւ արար որպէս աչաւք, ընչաւք, ականջաւք, բերանով, հինկերորդ՝ ներքին համովք: Միա բան շաղեալ պատին սոքա հնգեքեան, մանաւանդ զի իգական մասամբք կանացի ձայնիւք մեղքի լսելիքն մարդոյն. մեղկեալն, հոսեալն անկանի անքակութեամբ ընդ զուգակցին, աչք ընդ աչք կքի եւ հոտ ընդ հոտ կոծի, բերան համբուրէ եւ համք ընդ համս խառնին, զոր խոկումն անուանեցան: Այս չարի միաբանութիւն առ ծառոյն յայտնեցան. յղացաւ աւձն զկերպարանս աներեւոյթ չարութեան եւ եղեւ արու բնութիւն, միջնորդութեամբ պտղոյ ծառոյն պատրեաց եւ մեղկացոյց զե (5) զգայութիւնս իգական մասինն, յապուշ կրթեաց զմիտք կնոջն, մոռացումն արար զպատուիրանն Աստուծոյ մինչ չեւ մտեալ ի պատերազմ պարտեցաւ ի հայելոյն միայն, յորմէ դու պարտիս զգուշանալ:

---

4 «Մատենագիրք Հայոց», Ա, Անթիլիաս, 2003, էջ 941 (25-3):

Երկն օգտակար է ոչ միայն Երզնկացու ասպուածաբանական մտակառուցման, այլեւ միջնադարեան կերպարուեստի վարդապետական, կրօնափիլիսոփայական մի շարք առանձնայատկութիւնները ուսումնասիրելու տեսակետից: Ինչպէս յայտնի է, Քրիստոսի տնօրինական գործը ներկայացնող պատկերաշարի մէջ Համբարձումը, Երկրորդ գալուստը եւս, որպէս Եկեղեցու վարդապետական համակարգի բաղկացուցիչ, իր պատշաճ տեղն է զբաղեցրել միջնադարի կերպարուեստում: Իբրեւ կանոն՝ Քրիստոս այստեղ ներկայանում է գալարը կամ մատեանը ձեռքին: «Քրիստոս ամենակալ»-ի այսօրինակ պատկերագրումը շեշտում է ոչ միայն նրա՝ արդար դատաւորի, այլեւ Խօսքի, Բանի (Լոգոսի) այլակեցութիւնը հանդիսացող մարդացած Աստծոյ հանգամանքը, որը միջնադարի ասպուածաբանական գիտութեան մէջ նոյնացած է Խօսքը կրող գալարին կամ մատեանին: Ուստի պատահական չէ, որ Բանն-Աստուած արդէն վաղքրիստոնէական արուեստում ստանում է յունահռոմէական աստուածներին օտար նշանակ՝ գալար: Այդ ժամանակաշրջանում գալարը նոյնացւում էր օրէնքի հետ: Եթէ գալարի փաթոյթը քողարկում էր մարգարէական գրութիւններում խորհրդաւորապէս բնակւող հինկտակարանեան օրէնքը («Խորհրդաւոր գալար». Իւվենալիս), ապա յետագայում գալարին փոխարինելու եկած գիրքը (մատեան) դառնում է նորկտակարանեան յայտնութեան խորհրդանիշը[5]: Կրոնափիլիսոփայական, աստվածաբանական այս ըմբռնումն է ընկած Յովհաննէս Երզնկացի Պլուզի հետեւեալ խօսքերի հիմքում: Պատասխանելով Յովհաննէս եպիսկոպոսի այն հարցումին, թէ «Զի՞նչ է, զի ուր եւ փրկչական պատկեր է հանած՝ թուղթ մի փաթթած ի ձեռինն է»՝ Երզնկացին գրում է. «Զի որպէս մարգարէքն ամենայն եւ առաքեալքն ի նկարագրութիւն պատկերի հանեալք զիւրեանց խաւսեցեալ բանն գրեալ եւ ի ձեռինն ունին իբր թղթաբերք եւ պատգամաւորք՝ եկեալ յԱստուծոյ առ մարդիկ յԱստուած կոչելով եւ յերկնային փառսն, յորմէ անկաք յաշխարհս յայս: Նոյնպէս եւ Փրկիչն զիւր աւետարանական հրամանն, որ են գործք եւ բանք Քրիստոսի, ի ձեռին ունի: Իսկ այն, զի փաթթած է, ըստ հրէական աւրինին է, զի կաւնդակ եւ գալարելով ունէին նոքա զգիրսն որպէս թէ քան յայտ եւ ի ծածուկ էր ի նոցանէ խորհուրդ մարգարէիցն եւ թաքուն: Սոյնպէս եւ Քրիստոսի մինչ զտղայական հասակն նկարեն գալարեալ եւ փաթթեալ հանեն զթուղթն ի ձեռինն որպէս ի հրէիցն ծնեալ եւ զըստ աւրինացն զամենայն ինչ առնել: Իսկ զկատարեալ հասակն նկարելով ի ձեւ գրոց չորեքկուսի հանեն զԱւետարան ի ձեռին ունել եւ ի գիրկ: Զի ի գիրկ Կուսին տղայական տիաւք նկարել զՔրիստոս ունի զայս թուղթ ի ձեռին, զի որպէս յԵւայէ մահ տարածեցաւ յաշխարհ, ի սուրբ կուսէն Մարիամայ կեանք տուաւ Տէրն ազգի մարդկան: Եւ զայս գիր ասեն ի Հաւրէ տուեալ կենաց գիր անբաց եւ անընթեռնելի, զոր եբեր առ Կոյսն սուրբ, եւ նովաւ եւ մարդկան: Բայց անյայտ է գրեալն մինչ Խաչիւն եւ չարչարանաւքն զգիր պարտեաց նախասպեղծիցն պատառեսցէ, եւ ապա զայս գիր տացէ յայտնապէս»: Յովհաննէս Երզնկացու այս պատասխանը ոչ այլ ինչ է, քան աստուածաբանական հիմնաւորումն ու պատկերաբանական արդա-

5 Տե՛ս **С.С Аверинцев**, Поэтика ранневизантийской литературы, М., 1977, էջ 201-202:

րացումը «Համբարձման» եւ «Երկրորդ գալստեան» պատկերագրութեան: Համաձայն տեսական բովանդակութեան՝ վկայութիւնս կարելի է բաժանել երկու մասի. առաջին մասում մանուկ Յիսուսի ձեռքին եղած գալարը ակնարկում է Հայր Աստծո կողմից տրուած հինկտակարանեան օրէնքի կամ «կենաց» գրի ծածուկ եւ անընթեռնելի լինելը: Մինչդեռ երկրորդ մասում արդէն չարչարանքից եւ Խաչից յետոյ հասուն տարիքում Քրիստոսի՝ Աւետարանը ձեռքին ներկայանալը ցոյց է տալիս, որ նախասպեղծ ծնողների պարտամուրհակը պատռուած է. այն փոխարինուած է աստուածային յայտնութիւն բովանդակող Աւետարանով: Վկայութեանս առաջին մասն ուշագրաւ է նաեւ իր տեղեկատուական բնոյթով: Բանն այն է, որ «Տիրամայրը մանկան հետ», «Մոգերի երկրպագութիւնը» պատկերագրութեան մէջ մեծաւ մասամբ մանուկ Յիսուսը ներկայացնում է առանց գալարի: Մինչդեռ այս տեղեկութիւնը գալիս է փաստելու, որ հայ միջնադարում տարածուած է եղել նաեւ պատկերագրութեան այդ տարբերակն իր արդէն յայտնի խորհրդաբանութեամբ[6]:

Յովհաննէս Երզնկացի Պլուզի ներկայ աշխատութիւնը հրապարակում է ըստ մեզ յայտնի միակ ընդօրինակութեան՝ Մաշտոցի անուան Մատենադարանի թիւ 644 ձեռագրի, որ ժողովածու է՝ բաղկացած երեք տարբեր գրչագրերից: Հրապարակուող բնագիրը (78 բ-84 ա) Ա գրչագրում է (ժամանակ՝ ԺԵ դ., գրիչ Ներսէս կրօնաւոր. 5ա-165բ): Այն բաղկացած է տօնապատճառային միաւորներից[7]: Ձեռագրում առատօրէն կիրառուած է համառօտագիր - գաղափարագրութիւն:

ՅԱԿՈԲ ՔԷՈՍԷԵԱՆ

---

6 Մանուկ Յիսուսը գալարով է ներկայացնում հայկական (1007, 1033 թթ.) եւ բիւզանդական (ԺԴ դ.) ձեռագրերում. **Т. А. Измайлова,** Армянская миниатюра XI века, М., 1979, էջ 31, 37, **В. Д. Лихачева**, Византийская миниатюра.Памятники Византийской миниатюры IX-XV вв.в собраниах Советского Союза, М., 1977, էջ 49:

7 Նկարագրութիւնը տե՛ս «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի», հտ. Գ, կազմեց Օ. Եղանեան, խմբագրութեամբ Փ. Անթաբեանի, Յ. Քէօսէեանի, Ա. Ղազարոսեանի, Տ. Շահէ քհ. Հայրապետեանի, Եր., 2007, էջ 179-184:

ՏԵԱՌՆ ՅՈՀԱՆՆԻՍԻ ԲԱՐՁՐԱՏՈՀՄԻ ԵՒ ՄԵԾԱՋԱՐՄ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԴԱՒՓԻ ԹՈՌՆ ԿՈՉԵՑԵԼՈՅ ԱՌԱՔԵԼԱՋԱՐԴ ԵՒ ԻՄԱՍՏԱԽՈՀ ԳԼԽՈՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՀԱՐՑՈՒՄՆ ԲԱՆԻՑ ԱՌ ՆՈՒԱՍՏ ՅՈՀԱՆՆԻՍԻ ԵՐՋՆԿԱԵՑԻ ԵՒ ՊԱՏԱՄԽԱՆԻՔ ԸՍՏ ԹՈՒՈՅ ԳԼԽՈՅ ԲԱՆԻՑՆ ՀԱՐՑՄԱՆ

Հարցումն առաջին. Զի՞նչ է զի ուր եւ փրկչական պապկեր է հանած՝ թուղթ մի փաթթած՝ ի ձեռինն է:

Պատասխանի. Զի որպէս մարգարէքն ամենայն եւ առաքեալքն ի նկարագրութիւն պապկերի հանեալք զիւրեանց խաւսեցեալ բանն գրեալ եւ ի ձեռինն ունին իբր թղթաբերք եւ պապգամաւորք եկեալ յԱստուծոյ առ մարդիկ յԱստուած կոչելով եւ յերկնային փառսն, յորմէ անկաք յաշխարհս յայս: Նոյնպէս եւ Փրկիչն զիւր աւետարանական հրամանն, որ են գործք եւ բանք Քրիստոսի, ի ձեռին ունի: Իսկ այն, զի փաթթած է, ըստ հրէական աւրինին, զի կաւնդակ եւ գալարելով ունէին նոքա զգիրսն որպէս թէ քան յայտ եւ ի ծածուկ էր ի նոցանէ խորհուրդ մարգարէիցն եւ թաքուն: Սոյնպէս եւ Քրիստոսի մինչ զտղայական հասակն //(79 ա) նկարեն գալարեալ եւ փաթթեալ հանեն զթուղթն ի ձեռինն որպէս ի հրէիցն ծնեալ եւ զըստ աւրինացն զամենայն ինչ առնել: Իսկ զկատարեալ հասակն նկարելով ի ձեւ գրոց չորեքկուսի հանեն զԱւետարան ի ձեռին ունել եւ ի գիրկ: Զի ի գիրկ Կուսին տղայական տիւաք նկարել զՔրիստոս ունի զայս թուղթ ի ձեռին, զի որպէս յԵւայէ մահ տարածեցաւ յաշխարհ, ի սուրբ Կուսէն Մարիամայ կեանք տուաւ Տէրն ազգի մարդկան: Եւ զայս գիր ասեն ի Հաւրէ տուեալ կենաց գիր անբաց եւ անընթեռնելի, զոր եբեր առ Կոյսն սուրբ, եւ նովաւ եկ մարդկան: Բայց անյայտ է գրեալն մինչ խաչին եւ չարչարանաքն զգիր պարտեաց նախասպեղծից պատառեսցէ, եւ ապա զայս գիր տացէ յայտնապէս որպէս եւ զՀոգին Սուրբ յեկ իւրոյ անմեղ մահուանն ապա եկ մարդկան, զոր ինքն գլուխն մեր էառ ի մկրտութեան ոչ իբրեւ կարաւտ, զի իւր էր Հոգին, այլ՝ վասն մեր: Նոյնպէս եւ զկենացն գիր տուեալ յեկ զմահու պարտիսն թողլո, որպէս եւ զՀոգին տալով ասաց. «Հոգին է կենդանարար»[1]:

Երկրորդ[2] հարցումն. Այն, որ ասեն, թէ զպարտաւորեցելոյն գիրն պատառեաց ի վերայ խաչին՝ մի գիր է, թէ՞ Բ (2), կամ ինչ խորհրդով գիր կոչին:

Պատասխանի. Զայս բանի լուծումն ունիմք ի մեկնութենէ Առաքելոյն, որ ի սրբոյն Յոհաննու Ոսկէբերանէ, զի ի Կողոսացւոց թղթին է այն բան, որ ասէ. «Ջնջեաց զձեռագիր մերոյ հակառակութեան հրամանաւք իւրովք, որ կայր մեզ հակառակ, եբարձ զայն ի միջոյ եւ բեւեռեաց ընդ խաչափայտին[3]:

Իսկ յեղանակաւոր երգս կցրդի ասեն. «Զգիր պարտաւորեցելոյն պատառեաց»: Այլ եւ սուրբ վարդապետն Վանական հայր հարն մերոյ ի Հարցմանն իւրոյ գիրս

---

1 Յովհ. Զ 64:
2 Ձեռագրում՝ Երրորդ:
3 Կողոս Բ 14:

գրեալ է այսպէս. Եթէ այն, զոր ասաց Աստուած. «Եթէ ուրեմն ի պտղոյն մահու, մեռանիս», զայս որպէս զձեռն գիր ունէր սատանայ եւ նովաւ չարչարէր զմարդիկք, եթէ՝ Աստուած ասաց մի ուրեր, եւ դու կերար եւ մեռար, ի՞նչ մեղ է: Իսկ Տէրն զձեռն ի խաչին տարածեաց եւ որպէս թէ զայն գիրն պատառեաց, ասելով. «Նա կերաւ եւ մեղաւ եւ վասն այն մեռաւ: Ես զի՞նչ մեղայ, դու ես պատճառ ամենոյ»: Իսկ հրէիցն առանձինն ձեռագիր է, աւրէնս ասացին. «զամենայն, զոր ինչ ասասցէ մեզ Տէր Աստուած մեր՝ լուիցուք եւ արասցուք, եւ ոչ արարեն: Եւ զայն եւս պատառեաց: Իսկ քրիստոնէիցն ձեռագիր է ի գալն ի մկրտութիւն ի դրան եկեղեցւոյն, հրաժարել ի սատանայէ եւ հաւատալ յԱստուած: Եւ զի ոչ կարեմք, զայն պատառէ զեղջն եւ ապաշաւն խորհրդով պատարագին: Եւ //(79 բ) զայսոսիկ հայրն: Բայց էր ի հարցման Ձերոյ եւ այս թէ ինչ խորհրդով գիր են: Յաղագս այսորիկ սակաւ ինչ պարզութիւն արասցուք ասացելոց սրբոցն բանից: Եւ նախ զաւրինակ պարտուցն առաջի դիցուք զոր լինի ըստ սահմանի մարդկան: Զի որ տայ մարդոյ ոսկի կամ արծաթ փոդ առնու ի նմանէ ձեռագիր, թէ՝ Պարտ իմ զայս ինչ եւ վճարեմ այսչափ եւ յայսքան ժամանակս, եւ բանն, զոր գրեաց նախ ի միտսն էր եւ ծածուկ եւ անյայտ եւ ապա լեզուաւ եւ ձայնիւ առաջ եկն ի խաւսս, եւ ապա շարժմամբ ձեռին գրի ի քարտիսի: Զի այս չորք են նիւթ բանականութեան ընդ սգայարանսն. զտես կամ զլուր եւ խոկալ ի միտսն, եւ խաւսել լեզուաւ, եւ գրել ձեռամբ: Արդ, այսու աւրինակաւ իմասցիս եւ զգիր պարտաւորութեան, զի արար Աստուած զմարդն նման եւ պատկեր իւր, եւ եւ զպատուիրանն նիւթ ինքնութեան, որով ծանուցեալ լինէր հնազանդելն Արարչին կամ ոչ հնազանդել, զի էառ յԱստուծոյ զնման եւ զպատկեր լինելն, իբր զդահեկան ոսկի եւ եառ զբան պատուիրանին իբրեւ զարծաթ տպաւոր: Եւ զի բան պատուիրանին արծաթ կոչի ի բազում տեղիս, յայտ է եւ առաւել ի Տեառն հրամայեալսն, թէ՝ «Պարտ էր քեզ արկանել զարծաթն ի մի սեղանաւորս»[4]: Արդ, զայս ոսկի եւ զարծաթ առին նախաստեղծքն յԱստուծոյ փոխ եւ պարտական էին վճարել, կալ ի պատուիրանսն, եւ պահել զնմանութիւն եւ զպատկերն, որ եղեն, զի լուան զայս ականջաւք եւ խոկացին մտաւք եւ խաւսեցան լեզուաւ: Ի պատրելն աւձին թէ ասաց Աստուած՝ Մի՛ ուտիցէք եւ մի՛ հուպ լինիցիք, զի մի՛ մեռանիցիք: Եւ գրեցաւ այս յաւդտ իբր ի լայնատարած թուղթ: Եւ եղեն վկայ երկին եւ երկինք, թէ աչաւք տեսին եւ ականջաւք լուան եւ մտաւք իմացան եւ լեզուով խաւսեցան եւ եկին ի խրատ, որ պարտական են իւրեանց Արարչին հնազանդութեան եւ զնմանութիւն եւ զպատուիրանն պահելոյ, եւ ոչ արարին փոյթ վճարելոյ զպարտսն այլ թողին զստեղծողին հնազանդութիւն եւ հնազանդեցան թշնամւոյն կենաց մերոց սատանայի: Եւ նմա տուին ձեռագիր, եւ մտին ընդ պարտաւք, լուան զչար խրատն եւ ի միտ առին եւ տուին ձեռագիր, թէ պարտական է սատանայի: Եւ այս էր ձգել ձեռինն եւ առնուլն զպտուղն // (80 ա), որպէս թէ գրեցին ձեռաւք զմեղսն, որոց վայ տայ մարգարէն. «Վայ որք գրելով գրեն զչարիս իւրեանց»[5] եւ եղեն վկայ երկինք եւ երկիր, թէ պարտական էին նոքա Աստուծոյ, եւ ոչ վճարեցին, այլ ապստամբեալ յԱստուծոյ եւ տուն զանձինս պարտական սա-

4 Մտթ. ԻԵ 27
5 Եսայի Ժ 1:

պանայի: Եւ այսպէս ամենայն ծնունդք նախասպեղծիցն մտին ընդ այս պարտաւք՝ առնուլ ի սապանայէ զխորհուրդ մեղացն իբր ի փոխ, եւ առնել իւրեանց գլուխք եւ շահին զսակաւ հեշտութիւն, եւ տալ սապանայի վաշխ եւ տոկոսիս զտանջանսն եւ զչարչարանսն, զոր չարչարէր բանսարկուն զհոգիսն: Վասն որոյ թոյլ տայ Աստուած մարդկան գնալ, վասն զի կամաւ հեստեցին ի նմանէ, ըստ այնմ. «Բարձ ի թողի զնոսա՝ երթալ զհետ կամաց սրտից իւրեանց»[6]: Եւ այսպէս ընդ կրկին պատրանաւք էին. զբարին, զոր առ յԱստուծոյ անվճար թողեալ զգլուխսն եւ զշահնն, եւ սապանայի, որ ոչ ինչ պարտ էր, եմուտ պարտական՝ սակաւ մի հեշտութիւն մեղաց առնուլ ի նմանէ, եւ տալ վճար զտանջիլն ընդ նմա ի գեհենն: Այս է, զոր ասաց առաքեալն թէ՝ «Ի վաշխից չարեաց փրկեսցէ զանձինս նոցա»[7]: Եւ ո՞րպէս փրկեաց յայտ է ի Տեառն հրամանսն յԱւետարանին, զի ոմն պարտ էր հինգ հարիւր դրամական եւ ոմն հիսուն եւ երկոցունցն շնորհեաց եւ է հինգ հարիւրն հեթանոսաց եւ հիսուն՝ հրէիցն, զիւրն եթող եւ զսապանային, որ ի զուր էր զմեզ պարտաւորել, զայն պատառեաց եւ ջնջեաց, եբարձ:

Արդ, յայտ եղեւ, թէ զինչ է պարտաւորիլն եւ զինչ՝ զիրն: Քննեսցուք եւ զայն, թէ ո՞րպէս պատառեաց: Եւ արդ, պատառեաց զայն իրաւամբք եւ արդարութեամբ եւ ոչ բռնութեամբ: Եւ է այսպէս. զբնութիւն մարդոյն Աստուած արդար եւ անմեղ ստեղծ, եւ թէ պահեալ էր զպատուիրանն եւ չէր ի սապանայէ ի պատրել՝ ոչ էր լեալ պարտական: Նմանապէս եւ հրէայքն, թէ կամեցեալ էին կալ ընդ աւրինաւքն եւ չէին պատրել ի սապանայէ ոչ էին պարտական լեալ անիծից աւրինացն: Արդ, զի ոչ կարացին մարդիկ պահել զուղղութիւն բնութեանս, վասն որոյ Աստուած մարդ լինի, զի զիւր խորհուրդն որ ասաց. «Արասցուք մարդ ըստ պատկերի մերում եւ ըստ նմանութեան»[8], ի գլուխ հանցէ եւ մի՛ անկատար մնասցէ վասն մարդկան ոչ պահելոյն: Եւ սկսեալ ի ծննդենէն մինչ ի Խաչն մարտնչել ընդ նմա սապանայ, եւ ոչ կարեաց խոտորեցուցանել, զի զամենայն մարտս սապանայի կոխեաց Տէրն, եւ թէ որպէս երկարէ զամենայն ասել, այլ կարճ բանիւ մարգարէն ասէ //(80 բ). «Ոչ արար մեղս եւ ոչ գտաւ նենգութիւն ի շրթունս նորա»[9]: Եւ զի սապանայ չարախաւսէր զմարդիկ. թէ կամաւ մեղանչեն, եւ չեմ ես պատճառ: Արդ, Քրիստոս իւր անմեղութեամբն դատապարտեաց զնա, թէ՝ Որպէս իմ մարմինս անմեղ է, նոյնպէս եւ ամենայն մարմինք էին, եթէ ոչ պատրէիր դու, այլ մարդիկք քո պատրելովն մեղանչել եւ զի ինձ ոչ կարացեր դնել գայթակղութիւն, այնպէս պահել զբնութիւնս որպէս ի սկզբանն ստեղծի զԱդամ անմեղ, եւ դու խաբեցեր զնա՝ ձգելով պատրանաւք ի մեղս: Արդ, եթէ ինձ, որ անմեղ պահեցի զբնութիւնս զայս, ի վերայ շարժեցեր զիրէայսն անիծից եւ մահապարտաց սպանանել, ապա դու ես առիթ եւ պատճառ ամենայն մեղաց մարդկան: Եւ այսպիսի դատաստանաւ զնա պարտական մեղացն մեր արար, եւ զգիր պարտեացն մեր պատառեաց, զոր իւրն պարտէաք, եթող մեզ ողորմութեամբ

6 Սղմ. Բ 13:
7 Սղմ. ՀԱ 14:
8 Ծնող. Ա 26:
9 Սղմ. ԼԱ 2:

ինքն հաճեցուցեալ զՀայր փոխանակ ամենայն մարդկան եւ ի սատանայի պարապարտ ծառայութենէն ազատեաց եւ զնա յիշխանութենէն ձգեաց, ըստ այնմ, թէ իշխան աշխարհիս այսորիկ ընկեսցի արտաքս, եւ ես յոյժ բարձրացայց ի խաչն զամենեսեան ձգեցից առ իս[10]: Արդ մեծի տնաւրէնութեան խորհրդոյ սակաւ ինչ լուծումն այսոքիկ, զի մի՛ առաւելն երկարաբանութիւն լիցի:

Հարցումն երրորդ. Զի՞ Քրիստոս Վասն ամենայն մարդկան փրկութեան եկն յաշխարհ եւ բազումք այժմ կան դեռեւս յանհաւատութեան, ուր ոչ հասաւ առաքեալ: Եւ ոմանք լսեցին եւ ոչ հաւատացին եւ են այժմ, որք լսեն զտնաւրէնութիւն Քրիստոսի եւ ոչ հաւատան՝ վասն է՞ր ոչ փրկեցաւ ամենայն ազգ մարդկան:

Պատասխանի. Առ երրորդ բանս հարցման յոլովից կարաւտիմք քննութեան իմաստից եւ երկայնութեան բանից, որով մերկ լսողացն ի ճաշակս բանին քաղցրասցին, եւ առ այսոսիկ եւ զայլ բանս տարակուսանաց մերձ դիցուք եւ զայն եւ զայս քննեսցուք: Արդ, գրէ առաքեալն, եթէ՝ «Զստուեր հանդերձելոց բարեացն ունէին աւրէնք»[11], եւ դարձեալ ասի. «Այն ամենայն ընդ նոսա աւրինակաւ անցանէր այլ գրեցաւ ի մեր վարդապետութեան»[12]: Վասն որոյ զայն յիշելով զպարտս քոյոյ խնդրոյս հանդերձ վաշխիւն վճարեսցուք: Եհան Աստուած զորդիսն Իսրայէլի եւ եկ նոցա զերկիրն Պաղեստին ի ժառանգութիւն, զոր խոստացեալ էր հարցն նոցա եւ խլեաց անտի զքանանացիսն Ժ (10) ազգ, բայց ոչ ի սպառ ջնջեաց զնոսա, այլ եթող զոմանս յայլ ազգացն որք եւ պատերազմէին ընդ նոսա: Եւ զպատճառն Ինքն՝ Աստուած յաւել. «Ոչ մերժեցից զնոսա, ասէ, ի միում ամի, զի մի՛ երկիրն անապատ լիցի եւ բազմանայցեն ի վերայ քո գազանք երկրի. առ սակաւ սակաւ մերժեսցես զնոսայ մինչեւ աճեսցես եւ ժառանգեսցես զամենն»[13]: Եւ երկրորդ պատճառ. զի որդիքն քո ուս//(81ա)ցին զաւրէնս պատերազմի՝ միշտ կռուելովն ընդ նոսա: Եւ երրորդ՝ զի չէ լցեալ չափ մեղացն նոցա որպէս ասէր. «Չեւ եւս են լցեալ մեղք Ամորհացւոցն»[14]: Արդ, վասն այս Գ (3) պատճառիս ոչ եբարձ զամենայն քանանացիսն յերեսացն Իսրայէլի: Այսպէս եւ զազգս մարդկան, զոր արար ի պատկեր իւր եւ զապստամբն սատանայ ընկեց յերկնից եւ զտեղին եկ որդոց Ադամայ, բայց ոչ ամենեւին եբարձ զնոցա իշխանութիւն, այլ թոյլ եկ եւ իշ[խ]ել, զոր իշխան աւդոյ ասէ առաքեալ[15]: Վասն որոյ փորձանք են նոքա մեզ, որպէս այլազգիքն՝ Իսրայէլի, որպէս եւ ի գիրս Դատաւորացն ասէ. «Փոխանակ, զի եթող ազգացդ զուխտ իմ, զոր պատուիրեցի հարցն դոցա, եւ ոչ լուան ձայնի իմում, եւ եւս ոչ յաւելից բառնալ յերեսաց նոցա զազգսն, զոր եթող Յեսու որդին Նաւեայ»[16]՝ փրկել նոքաւք զԻսրայէլ: Այսպէս եւ յոլովն ազգաց եթող Յիսուս ի փորձանս մեզ, զի յիրաւի մեք Քրիստոսի աւրինացն եղեալ յանցաւորք երկիցուք եւ զնոցա բարեկարգութիւն, որք ոչ ունին աւրէնս, տեսեալ ամա-

10 Հմմտ. Յովհ. ԺԲ 32:
11 Երր. Ժ 1:
12 Ա Կորնթ. Ժ 11:
13 Ելք ԻԳ 29-30:
14 Ծննդ. ԺԵ 16:
15 Տե՛ս Եփես. Բ 2
16 Դատ. Բ 20-21:

չեսցուք, զի մի անկարգութիւն է յոլով պատճառ նոցա յանհաւատութիւն: Եւ որպէս այլազգիքն շուրջ սահմանակիցք Իսրայէլի պատերազմէին ընդ նոսա, նոյնպէս եւ դեւք սահմանակիցք մեր, զի մեք ի դրախտէն եւ նոքա յերկնից անկան եւ եմք ի վերայ երկրի, եւ պատերազմեն միշտ ընդ մեզ եւ յարուցանեն փորձանս վասն այսոցիկ պատճառաց. առաջին, զի գիտասցուք զտկարութիւնս մեր թէ միշտ պատրիմք ի նմանէ, իբր զնախասպեղծսն առաջին, եւ այսպէս դիտելով զչափ զաւրութեան եւ մի՛ զազանք հպարտութեան եւ ամբարտաւանութեան բազմասցին ի վերայ մեր ի սակաւ ինչ ուղղելն մեր զառաքինութիւնս:

Եւ երկրորդ. զի երկիրն երկնային, ուստի անկան նոքա, տուաւ մեզ ի ժառանգութիւն վաստակաւք ու աշխատութեամբ մարմնոյ, ուսցուք պատերազմել ընդ նոսա, զի մի՛ ձրի միայն տացէ մեզ Աստուած զխոստացեալն, այլ եւ վարձ աշխատանաց: Եւ երրորդն. ներէ Աստուած սատանայի տալով զայսքան ժամանակս, զի անդարձ մնալով եւ զչափ իւրոց մեղացն լնլով իրաւամբ յաւիտենիւն տանջեսցի իւրովք գործակցաւքն եւ անդարձ մեղուցելովքն: Արդ, այսոցիկ Բ (2) գլխաւորական քննութեամբս յայտ լիցի եւ քո այժմու հարցուածս, զի եկն Քրիստոս յաշխարհս եւ կոչեաց զմարդիկ ի հաւատս: Բայց ոչ սպառեցաւ յաշխարհէ կռապաշտութիւն եւ անհաւատութիւնն: Եւ ահա լռեցին քարոզքն //(81բ) յաշխարհէ եւ բարձաւ նշանագործութիւն, որով բան հաւատոյն մտանէր ի սիրտս լսողացն, եւ որք ոչ հաւատացին, կան յանհաւատութեան խաւարի, եւ որք հաւատացեալքն եւ բազում վիշտս կրեն յանհաւատիցն: Արդ, զայսոսիկ հարկ է գիտել, թէ զի՞նչ աւգուտ է մեզ անհաւատս մնալն կամ զի՞նչ աւգտին նոքա ի մեր հաւատոյս, եւ թէ վասն է՞ր թոյլ եդ Աստուած լինել այսպէս: Արդ, լուար զաւրինակն, զի այլազգիքն Իսրայէլի հակառակ եւ դեւք՝ մարդկան, նմանապէս եւ անհաւատքն հաւատացելոցս այժմ: Արդ, եթէ ի հակառակութենէ այլազգեացն զինչ շահ գոյր Իսրայէլի՝ ասացաւ եւ ի մարտնչելն դիւաց ընդ մարդիկ, եւ այն յայտնեցաւ ասեմք եւ զայն թէ՝ հաւատիցն մնալն զինչ աւգտիմք հաւատացեալքս: Եւ գիտելի է, զի ի նեղելն նոցա եւ տառապեցուցանելն զմեզ զսէրն Քրիստոսի, յիշեսցուք մեք եւ զչարչարանսն, որ վասն մեր եւ համբերեսցուք որպէս մարտիրոսքն սուրբ եւ վկայքն, որք զարիւնս իւեանց հեղին ի սէրն Քրիստոսի:

Եւ երկրորդ (sic), զի միշտ ի հալածանս կալով մի՛ հպարտասցուք, այլ զԴաւթայն յիշեսցուք. «Բարի է ինձ, զի խոնարհ արարեր զիս, որպէս ուսայց զարդարութիւնս քո»[17]: Եւ այս է արդարութիւն, զի յորժամ վասն ուղղութեան հպարտանամք կամ ի դիւաց կամ ի մարդկան անկեալ փորձութիւնս՝ խոնարհիմք եւ յԱստուած ապաւինիմք: Եւ մի՛ վստահասցուք յանձին զաւրութիւն, եւ եթէ սխալեմք, խրատիմք նոքաւք, զի թագաւորք վարժիչս կարգեն որդոց, զի տանջմամբ գաւազանի խրատեն: Եւ այս գթութեամբ հայրենի ապէն դատիլ, զի մի՛ ընդ աշխարհի դատապարտեսցուք յապտեանն ահաւոր:

Եւ երրորդ. զի լցցի եւ նոցա չափ մեղացն, որք ապէն գնան ըստ կամս անձանց եւ վարին ըստ իւրեանց ախորժակացն, անդ իրաւամբք զրկին ի յաւիտենից կենացն:

---

17 Սղմ. ճԺԸ 71

Եւ թէ ասէ ոք, թէ այլազգիքն Իսրայէլի էին յաւգուտ եւ դեւք մարդկան առաքինութեան պատճառ, եւ անհաւատքն՝ հաւատացելոց, զի եւ ինքեանք նոքա ստեղծուած են Աստուծոյ, նոցա չէ՞ր արժան խնամ տանել Աստուծոյ, գիտացիր, զի ոչ ինչ պակաս եթող ի խնամոցն, զի այն ամենայն աքանչելիքն, որ յԵգիպտոսին փարաւոն եւ եգիպտացիքն, եւ այն զոր քանանացիքն լուան եւ տեսին միթէ՞ չէր բաւական, եթէ կամեցեալ էին հաւատալ: Նոյնպէս սատանայ եւ դեւք, որ ի սկզբանէ աշխարհի մինչ ի կատարած, զոր տեսին եւ զոր տեսանեն զզաւրութիւն Աստուծոյ եւ աքանչելիսն տնաւրէնութեան Քրիստոսի, միթէ՞ չէ բաւական, եթէ կամէին զղջանալ, բայց ոչ թողու չարութիւն ամբարտաւանութիւն նոցա խոնարհիլ եւ զղջանալ, այլ միշտ զինքեանս ուղ[ղ]եալ կարծեն եւ զԱստուծոյ դատաստան՝թիւր: Եւ այնպէս կան //(82ա) յանդարձութիւն չարեացն, զի զայն անբաւ աքանչելիքն տեսեալ ոչ աւգտեցան: Եւ Տէրն առ Երուսաղէմ ասէ. «Քանիցս անգամ կամեցայ ժողովել զմանկունս քո եւ ոչ կամեցայք»[18]: Նոյնպէս եւ այժմ, որք ոչ են ի հաւատսն Քրիստոսի եւ հպարտացեալն եղեն զհաւատացեալսն աշակերտեալք ամբարտաւանութեան սատանայի, եւ ուսեալք ի նմանէ՝ զհաւատացեալքն թիւր կարծեն եւ զինքեանս՝ ուղեղ, որպէս եւ այժմ ազգն Իսմայէլի եւ Հագարու եւ ամենայն հերձուածող թիւրեալք ի ճշմարտութենէն եւ մեղսասէր մարդիկ: Եւ զայս Տէրն յԱւետարանին եցոյց յառակ սերմանցն. որոմն ի ճանապարհի անկաւ ի կոխանսն մեղաց. ոմն յապառաժի՝ ի կարծրացեալսն սրտիւ, ոմն ի մէջ փշոցն, որ են աշխարհի եւ փառաց սիրոյ հոգաւք ցնորեալքն: Նոյնպէս եւ երեք բաժանին եւ բարի սերմանցն ընդունաւղք:

Դարձեալ ծանիր եւ զայս. այսոքիկ որ ընկալան զհաւատն Քրիստոսի եւ որդիական կարգին են եւ Հայր զԱստուած անուանեն, եւ այժմ տեսանէք, զի ըստ Մաղաքիայ պատգամին, որ յԱստուծոյ ոչ երբէք զՀայր Աստուած փառաւորեն եւ ոչ երբէք ծառայ[ք] ի Տեառնէ երկնչին[19], ապա լաւ է նոցա, որք ոչ ծանեան զարդարութեան ճանապարհն, քան թէ այնոցիկ, որք ծանեան եւ ոչ գնան ուղեղ, մանաւանդ թէ անուամբ հաւատացեալք եւ գործովք յետս կացեալ: Ո՞ր է հաւատոյս արժանաւոր վարքն, ո՞ր է պայծառ կենացս եւ երկնաւոր կարգիս մաքրութիւն, ո՞ր է Քրիստոսաւանդ սէրն, ո՞ր է Աստուծոյ դատաւորութիւն եւ թագաւորութեան նմանական պատկերն ի թագաւորս, յիշխանս եւ ի դատաւորս եկեղեցւոյ, զոր եթէ ոչ յանդգնութիւն է ասել, ի դէպ է եթէ ոք արասցէ, եթէ որպէս զղջացաւ Տէր, զի արար զմարդն ի վերայ երկրի, եւ թագաւորեցոյց զՍաւուղ, նմանապէս եւ զայս, որ զսոսկալի խորհուրդ տնօրէնութեանն եւ զաստուածային զայս հաւատ եկ, եւ որք ընկալանն, ըստ արժանւոյն ոչ պահեն: Նա եւ զայս գիտել պարտ է, զի վասն այսորիկ բարձան նշանք եւ աքանչելիք, զի պակասեաց հաւատ, որպէս ասաց Տէրն. եթէ ունէիք հաւատս ըստ չափոյ մանանխոյ հատոյ՝ զլերինս փոփոխէիք[20], եւ թէ որպէս պակասեաց հաւատ: Լուր: Առաքեալքն սուրբ եւ քարոզքն ճշմարտութեան տնկողք են ընդ Քրիստոսի զհաւատոյն տունկ ի սիրտս հաւատացելոց: Արդ, չորք են սոքա տնկաւղն եւ տունկն եւ

18 .Մտթ. ԻԳ 37:
19 Տե՛ս Մաղաք. Բ 9-10:
20 Տես Մտթ. ԺԷ 19:

պտուղն եւ պատուար եւ նեցուկ: Տնկող՝ քարոզքն բանին որպէս ասէ Պաւղոս. «Ես տնկեցի, ապաւղոս ջուր եկ»[21]. զոնկ հաւատն, պտուղ գործքն, պատուար եւ //(82 բ) պատ եւ նեցուկ հաւատոյ տնկոյն՝ սքանչելիքն, որ գործէին: Արդ, զոր աւրինակ տնկոյն՝ որքան նոր է եւ մատաղ՝ պիտոյ է բոլոր աւգնական եւ նեցուկ, իսկ յորժամ արմատանայ, յայնժամ պարտ է, որ տունկն այլոց իրաց ամրութիւն եւ բարձող լինի: Նոյնպէս եւ այս, զի յորժամ նոր էր հաւատն, պիտոյ էր սքանչելագործութիւն քարոզողացն հաւատոյ, որ ի միտ առնուին անհաւատքն զբան հաւատոյն: Իսկ այժմ, զի արմատացաւ հաւատն, գործքն է պիտանի, որ է պտուղ հաւատոյն, եւ այն է փոխանակ սքանչելեացն՝ վկայ ճշմարտութեան հաւատոյն, որպէս ասաց Տէրն. «Տեսցեն զգործս ձեր բարիս եւ փառաւորեսցեն զՀայրն ձեր որ յերկինս»[22]: Եւ թէ՝ «Սկսաւ Յիսուս առնել եւ ուսուցանել»[23], եւ զի աւգտակար է այժմ եւ հանդերձեալն գործք քան զսքանչելիսն: Յայտ անտի. «Տէր, Տէր, բաց մեզ, ո՞չ յանուն քո մարգարէացաք եւ դեւս հանաք եւ զաւրութիւնս բազումս արարաք»[24]: Եւ լսեն պատասխանի, թէ՝ «Ոչ գիտեմ զձեզ, ի բաց կացէք յինէն ամենեքեան, որ գործէք զանաւրէնութիւն»[25]: Ահա որ բարի են գործք քան զնշան սքանչելեաց, եւ զսայ վասն այնորիկ յիշեցի, զի թէ էր գործ բարի մեզ հաւատացելոցս եւ գնացաք արժանի կոչմանս, յոր եւ կոչեցաք բաւական քարոզք էաք նոցա, որք կան յանհաւատութիւն: Բայց այժմ զառաքելականն տեսանէք հրաման, զի այնոքիկ, որ զաւրէնս Քրիստոսի ոչ ունին, բնութեամբ զաւրինացն կատարեն[26]: Եւ որք աւրինաւքն Քրիստոսի պարծին, ընդ անցանելն զաւրինաւքն, լինին քրիստոսական աւրինացն անարգիչք. զի այժմ զմեր ամենայն ինչ բարութիւն առ նոսա տեսանեմք. որք ոչ են ի հաւատն Քրիստոսի: Նոքա սիրովն զեղեալ եւ լցեալ, եւ մեք ցամաքեալք, նոցա միաբանութիւն եւ մեզ քակտումն, նոքա ի կարգն եւ ի սահման ուսման եւ աղաթից եւ գլխաւորութեան իմաստուն քաղաքավարութեան եւ արժանաւորութեան մեծի եւ փոքու, եւ մեզ՝ յոլով անկարգութիւն, նոցա ձեռ պարկեշտութեան, եւ մեզ՝ անառակութեան, նոքա դպրաւորք, եւ մեք ոսոխասէրք առաջի նոցա, ըստ առաքելոյն հաղորդելոյն, թէ՝ «Զանարգս եկեղեցւոյ դպրաւոր նստուցանէք»[27]: Արդ, այսոքիկ յոլովս քան զսոյն է պատճառ. ոմանք ի հաւատոցն Քրիստոսի արտաքոյ մնալոյ, որ ի զաւրութենէ ասացելոցս յայտ լիցի եւ այլն, զի այս է ըստ չարին:

Հարցումն չորրորդ. Հրամայէ Փրկիչն յԱւետարան, թէ՝ «որ ասիցէ ցեղբայր իւր մորոս՝ պարտաւոր լիցի գեհենին»[28], ապա ո՞րպէս կարասցուք ապրել, եւ ի՞նչ է հնարն մեզ, որ ոչ լինինք գեհենին:

---

21 Ա Կորնթ. Գ 6:
22 Մտթ. Ե 16:
23 Գործք Ա 1:
24 Մտթ. Է 22:
25 Մտթ. Է 23:
26 Տե՛ս Հռովմ. Բ 14:
27 Ա Կորնթ. Զ 4:
28 Մտթ. Ե 22:

Պատասխանի. Յաղագս փէրունեան հրամանիս զանազան //(83 ա) կարծիս եղեւ քննող մտաց մարդկան: Ոմանց ծանր թուի հրամանս եւ խիստ, եթէ ընդ դոյզն բանից այսպիսի պատիժս ենք կրելոց զգեհենն: Եւ ոմանց ըստ աւելեաց թուի ասացեալս վասն ահ արկանելոյ: Արդ, նոցա, որ ծանր թուին սպառնալիքն եւ փոքր մեղանքն Բ(2) են պատճառ. մին զի այնքան սովորել ենք անդուռն բերանով ի խաւսս անպատշաճս, մինչ զի փոքր թուի «մորոս» ասելն, եւ երկրորդ. զի ոչ ունելով փոյթ գիտելոյ զաւրութիւն բանից եւ անուանց ոչ իմանամք զմիտս ասացելոցն, զի «մորոս» ասելն յիմար ասէ եւ անմիտ, եւ այս մեծ տեսակ է մեղաց, զի մարդ մտաւք պատկեր է Աստուծոյ, եւ յիմար եւ անմիտ ասելն ի պատկեր Աստուծոյ լինելոյն զրկէ եւ յանասնոց ձգէ կարգս, յորմէ ազատեաց Քրիստոս եւ յորդիականն եհան կարգ, զորոց Պաւղոս ասէ. «Մեք զմիտս Քրիստոսի ունիմք»[29]:

Եւ երկրորդ. Թէ եւ փոքր կարծես եւ այն եւս ի մեծն ելանիցէ, զի ամենայն մեղք փոքր սկսանի եւ մեծանայ, որպէս փոքր է թիւնք աւձի եւ խայթոց կարճի, բայց մահ ածէ: Վասն որոյ զմանունս կարճէ, զի մի՛ ի մեծամեծս ելանիցեն:

Եւ երրորդ. Զի մեծ մասն պատժոցն եւ մեղացն ի բանիցն սկսանի, ըստ այնմ. «Եթէ ոք բանիւ ոչ յանցանէ, նայ է մարդ կատարեալ»[30], զի հայհոյութիւն, ուրացութիւն, չարախաւսութիւն, թշնամանք ի բանից են: Վասն որոյ Տէրն ի հրեշտակացն հանէ զմեզ ի կարգ, ուր ոչ գոյ բանից սխալանք, այլ փառաբանութիւն եւ աւրհնութիւն: Եւ դարձեալ եւս մեծագոյն. ի նմանութիւն Աստուծոյ խրատէ ելանել զայն, որ Աստուած բնութեամբ ունի, մեզ կամաւք ստանալ, զի ասաց Տէրն. «Ի բանից քոյ արդարացիս եւ ի բանից քոյ պարտաւորեսցիս»[31]: Եւ խրատէ մեզ ոչ պարտաւորիլ, այլ զուսուցանել զայն, որ ասաց. «Եղերուք կատարեալ որպէս եւ Հայրն ձեր երկնաւոր կատարեալ է»[32]: Իսկ թէ ո՞րպէս ապրեսցուք ի գեհենոյն, մեծ իմաստ ուսանիմք յայսմ հարցմանէ, զի թէ ի մեր գործքն վստահանամք մին բառս այս, որ ի «մորոս» պարտաւոր առնէ զմեզ գեհենքն եւ այլք առաքինութիւնքն ոչ աւգնեն: Իսկ եթէ ի շնորհքն Քրիստոսի ապաւինիմք, որով փրկեցաք եւ արդարացաք եւ ապրեցաք, նայ զմաքսաւորս արդարացոյց, զպոռնկին յանցանսն շնորհեաց, զաւազակն ի դրախտն եմոյծ, եւ որ ինչ այսմ նման են //(83 բ), վասն որոյ յառաջ քան զայս բան զարքայութեան ճառեաց եւ ապա զգեհենն յիշէ, զի գիտասցուք, թէ արքայութեան ժառանգութիւն կամաւք եւ հաճութեամբ է մեզ պատրաստեալ յԱստուծոյ, իսկ գեհենն՝ սակս մերոյ յանցանացն: Եւ յաղագս այսորիկ մի՛ ոք պարծեսցի իւրովք գործաւքն, այլ ապաւինեալ ի շնորհսն, եւ ապրեսցի ի գեհենոյն: Որպէս ասէ մեծն Յոհաննէս. «Արիւն Յիսուսի սրբեսցէ զմեզ յամենայն մեղաց մերոց»[33]: Զի արեամբն, որով ապրեցաքն, դարձեալ նովիմբք ապրեսցուք, յորժամ ճաշակեմք զնա, եւ այն է ճաշակելն զնա, յորժամ հոգոյ աչաւք ի նա հայիմք, որ ընդ աջմէ Հաւր մարմնոյ

29 Ա կորնթ. Բ 1:
30 Յակ. Գ 2:
31 Մտթ. ԺԲ 37:
32 Մտթ. Ե 48:
33 Ա Յովհ. Ա 7:

աչաւք զնա տեսանեմք, զի ի սեղան սուրբ պատարագի վասն մեր. բերանով զնա ճաշակեմք, ականջաւք զնորայն խաւսքն լսեմք, այսպիսի ճաշակմամբ քաւիմք եւ արդարանամք: Գիտասջիր եւ զայս, եթէ ի բնութիւնս մարդոյս եկեսցես, գտցես ի սմայ նոր զաւրութիւն՝ եթէ կամի աւձաձեւ լինի, եւ եթէ կամի՝ աստուածաձեւ. առաքինութիւն մարդոյն է աստուածային կերպարանք, զոր Աստուած բնութեամբ ունի, մարդ ստանալով ստանալ կարէ: Ապա եթէ ընդ երկիր պշնուցու եւ զգործովք սորա շաղեալ պատի՝ ինքն զինքն աւձաձեւ արար որպէս աչաւք, ընչաւք, ականջաւք, բերանով եւ հին կերորդ՝ ներքին համովք: Միաբան շաղեալ պատի սոքա հնգեքեան, մանաւանդ, զի իգական մասամբք կանացի ձայնիւք մեղքին լսելիքն մարդոյն՝ մեղկեալն, հոսեալն անկանի անքաւութեամբ ընդ զուգակցին, աչք ընդ աչք կքի եւ հոտ ընդ հոտ կոծի, բերան համբուրէ եւ համք ընդ համս խառնին, զոր խոկումն անուանեցան: Այս չարի միաբանութիւն առ ծառոյն յայտնեցան, յղացաւ աւձն զկերպարանս աներեւոյթ չարութեան եւ եղեւ արու բնութիւն, միջնորդութեամբ պտղոյ ծառոյն պատրեաց եւ մեղկացոյց զԵ (5) զայութիւնս իգական մասինն, յապուշ կրթեաց զմիտք կնոջն, մոռացումն արար զպատուիրանն Աստուծոյ մինչ չեւ մտեալ ի պատերազմ՝ պարտեցաւ ի հայելոյն միայն, յորմէ դու պարտիս զգուշանալ: Աստուածազարդ արքայն եւ հոգելից մարգարէն Դաւիթ հայցէր ինքեան զարթուցանել զաչս իմանալի հոգոյն, զի գեղեցկապէս նայեսցի ի աքանչելիս աւրինացն Աստուծոյ, եւ ես զնորայն առեալ նուագ մարգարէական ձայնի, զի եւ //(84 ա) զիմ զաչս զարթուցէ ոչ զայն ասեմ, որ ի քնոյ բնաւորականէ, այլ ի ցնորից թմբրութենէ, որ ծանրացեալ խնուն զիմ զգայարանս, յորմէ լքեալ լուծանին գործարանք Բանին: Վասն զի եղեւ ինձ յանկարծակի հիացումն եւ մտածութեանս իմոյ զարհուրումն, պատեաց շուրջ զինեւ տագնապ եւ լինի յանձին իմում խորշումն: Հիացումն եղեւ ինձ ի մեծ եւ ի նոր տեսութենէս, թէ զի՞նչ յիս խորհուրդս. այսքան պատուելի եւ պատկառելի անձինք իմաստութեան բանին բաժանորդք եւ Հոգւոյն հանճարոյ հոգի հեզութեան հաւաքողք ի դէպ ժամու զմուտ եւ զել դրանց իմաստից փակողք եւ բացողք, զոր եւ այժմ տեսանեմ պատրաստք յունկնդրութիւն:

Եւ Քրիստոսի՝ պսակաւոր սրբոց՝ վայել է փառք, իշխանութիւն եւ պատիւ այժմ եւ յաւիտեանս յաւիտենից. Ամէն: